ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

2025թ. օգոստոսի 6-ին <<Կրաքար>> ՍՊԸ-ի ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի Ավշար բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցած Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների և հարակից տարածքների օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների հանրային լսումների վերաբերյալ /1-ին քննարկում/

գ. Ավշար 06.08.2025թ.

Հանրային քննարկմանը մասնակցում էին ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի ղեկավար Ա. Ավետիսյանը, Ավշար բնակավայրի վարչական ղեկավարը, <<Կրաքար>> ՍՊԸ-ի ներկայացուցիչներ Լ. Ավետիսյանը, Վ. Ավետիսյանը և բնակիչներ:

Նիստը վարեց Արարատ համայնքի ղեկավար Ա. Ավետիսյանը և ներկայացրեց հրավիրված քննարկման նպատակը և ընթացակարգը, որը նախատեսված է ՀՀ կառավարության 2023թ. դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ և <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքով: Նախատեսվող գործունեության վերաբերյալ ելույթ ունեցավ Վ. Ավետիսյանը, որ <<Կրաքար>> ՍՊԸ-ն ցանկանում է իրականացնել Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ և հարակից տարածքների օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ, ինչը համապատասխանում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի թ. ենթակետին՝ ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանում կամ հանքանյութի վերամշակում՝ օրական 30 խմ և ավելի և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2)-րդ կետի ա. ենթակետին՝ երկրաբանական ուսումնասիրություններ:

Ելնելով օգտակար հաստվածքի տեղադրման պարամետրերից, օգտակար հաստվածքի և մակաբացման շերտի հզորություններից, տրավերտինների մշակումը

նախատեսվում է կատարել բաց լեռնային աշխատանքներով՝ միակողմանը ընդերկայնական ընթացքաշերտերով: Մակաբացման ապարների հեռացումը և տրավերտինների արդյունահանման աշխատանքները կատարվելու են բուլդոզեր-էքսկավատոր-ավտաինքնաթափ լեռնատրանսպորտային համակարգի կիրառումով: Տրավերտինի զանգվածի արդյունահանումը կատարվելու է նախնական փխրեցումից հետո: Մակաբացման ապարները պահեստավորվելու են արտաքին լցակույտում:

Աշխատանքային ռեժիմը ընտրվել է ելնելով տեխնիկական առաջադրանքից և կլիմայական պայմաններից: Արդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել շուրջտարի: Աշխատանքային օրերի քանակը ընդունվում է 260 օր տարում: Աշխատանքային հերթափոխերի քանակը օրում ընդունվում է 1, հերթափոխի տևողությունը - 8.0 ժամ:

Օգտակար հանածոյի արդյունահանման համար հայցվող ժամկետը կազմում է 20 տարի:

Կատարվելու են լեռնակապիտալ և նախապատրաստական աշխատանքներ՝ մակաբացում, ճանապարհների կառուցում և կարգաբերում, աշխատանքային հրապարակի կազմակերպում:

Բացահանքում կատարվող բոլոր լեռնային աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել պահպանելով «Հանքավայրերը բաց եղանակով մշակելու անվտանգության միասնական կանոնների» և «Հանքավայրերի տեխնիկական շահագործման կանոնների» պահանջները: Մասնավորապես, անհրաժեշտ է՝

- աշխատանքի ընդունվող բոլոր բանվորների հետ անցկացնել անվտանգության տեխնիկայի նախնական ուսուցում իր մասնագիտության գծով և,գիտելիքների ստուգման համար, ընդունել քննություն:
- կատարել բացահանքի ճարտարագիտա-տեխնիկական անձնակազմի գիտելիքների ստուգում:
- եռամսյակը մեկ անգամ անցկացնել անվտանգության տեխնիկայի գծով հրահանգավորում,
- հերթափոխի պետի կողմից, աշխատանքներն սկսելուց առաջ, կատարել աշխատանքային տեղի զննում և տալ գրավոր առաջադրանք՝ կատարողի ստորագրությամբ,
- բանվորներին ապահովել սարքին գործիքներով և պաշտպանական միջոցներով,

- ավտոտրանսպորտային միջոցները թույլ տալ աշխատելու միայն այն դեպքում, երբ դրանք սարքին են և կանոնավոր գործում են դրանց վրա տեղադրված գազախառնուրդների չեզոքացման սարքերը,
- փոշենստեցման նպատակով, դրանց առաջացման բոլոր օջախները՝ մուտքային ավտոճանապարհները, աշխատանքային հրապարակները, հանքախորշերը կանոնավոր կերպով ջրել ջրցան մեքենայով:

Արդյունահանման աշխատանքների ժամանակ կատարվելու են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բոլոր բնապահպանական միջոցառումները.

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց տարողությունների մեջ, տեղափոխվում մոտակա կազմակերպված աղբավայր համաատասխան ծառայություն մատուցող կազմակերպության ուժերով՝ կնքված պայմանագրի հիման վրա:
- Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում :
- Փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների (աշխատանքային հրապարակ, հանքախորշ, մուտքային ավտոճանապարհը և այլն) ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին :
- Կեղտաջրերի հավաքում հորատիպ բետոնապատ պատերով հորում, որը պարբերաբար դատարկում է հատուկ ծառայության ուժերով : Աշխատանքների ավարտից հետո դատարկված փոսը կլցվի քարերով :
- Խախտված տարածքների լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա :
- Ընդերքօգտագործման թափոնների կառավարում :
- Շրջանի կենսաբազմազանության պահպանության նպատակով տեղամասի շահագործման աշխատանքներին մասնակցող անձնակազմը անցնելու է հատուկ վերապատրաստում և ծանոթանալու է շրջանում հայտնի՝ ՀՀ կենդանիների և բույսերի կարմիր գրքերում գրանցված տեսակների վերաբերյալ:
- Աշխատակիցների հրահանգավորում, ծանոթություն անվտանգության տեխնիկայի կանոններին:

- Տեղամասի տարածքի պարագծով տեղադրվելու են նախազգուշացնող նշաններ, ինչը թույլ կտա կանխել անվտանգության տեխնիկայի հրահանգավորում չանցած մարդկանց մուտքը հայցվող տարածք:
- Արտադրական տարածքի կանաչապատում թփերով և գաճաճ ծառատեսակներով :
- Հազվագյուտ երկրաբանական մերկացումներ և հանքաբանական գոյացումներ, երկնաքարեր, հնէաբանական, հնագիտական, գիտական և գիտամշակութային հատուկ արժեք ներկայացնող այլ օբյեկտներ հայտնաբերելու դեպքում դադարեցնել աշխատանքները և այդ մասին հայտնել լիազոր մարմնին՝ հետագա աշխատանքների ընթացքը պարզաբանելու նպատակով:
- Աշխատանքների ընթացքում կիրառել պատահական գտածոների ընթացակարգը :

Այնուհետև Արարատ համայնքի ղեկավարը ներկայացրեց հողի վարձավճարի չափի մասին և սոցիալական ծրագրերի մասին տեղեկատվություններ:

Ընկերության ներկայացուցիչը ներկայացրեց նաև հարակից տարածքների օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների նպատակը:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները ներառում են հետևյալ գործողությունները՝ տոպոհանույթ, երկրաբանահանութային աշխատանքներ, հետախուզական հորատում, փորձնական բացահանքի անցում և փորձնական արդյունահանում, նմուշարկում, լաբորատոր փորձարկումներ:

Ծրագրավորվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները կկատարվեն ՀՀ Աշխատանքային օրենսգրքի, ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի և «Տեխնիկական անվտանգության ապահովան պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի և այլ նորմատիվային փաստաթղթերի դրույթներին համապատասխան:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց տարողությունների մեջ, տեղափոխվում մոտակա կազմակերպված աղբավայր համաատասխան ծառայություն մատուցող կազմակերպության ուժերով՝ կնքված պայմանագրի հիման վրա:

- Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում :
- Փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների (աշխատանքային հրապարակ, հանքախորշ, մուտքային ավտոճանապարհը և այլն) ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին :
- Կեղտաջրերի հավաքում հորատիպ բետոնապատ պատերով հորում, որը պարբերաբար դատարկում է հատուկ ծառայության ուժերով : Աշխատանքների ավարտից հետո դատարկված փոսը կլցվի քարերով :
- Խախտված տարածքների լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա :
- Ընդերքօգտագործման թափոնների կառավարում :
- Շրջանի կենսաբազմազանության պահպանության նպատակով տեղամասի շահագործման աշխատանքներին մասնակցող անձնակազմը անցնելու է հատուկ վերապատրաստում և ծանոթանալու է շրջանում հայտնի՝ ՀՀ կենդանիների և բույսերի կարմիր գրքերում գրանցված տեսակների վերաբերյալ:
- Աշխատանքների ընթացքում կիրառել պատահական գտածոների ընթացակարգը :

Հորատանցքերի միջև հեռավորությունն ընտրված է այնպես, որ հնարավոր լինի օգտակար հանածոյի պաշարները գնահատել արդյունաբերական $A+B+C_1$ կարգերով:

Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրության նպատակով նախատեսվում է վերցնել նմուշներ: Ուսումնասիրվելու են ապարների ծավալային զանգվածը, տեսակարար կշիռը, ջրակլանումը, ամրության սահմանը սեղմման ժամանակ, մաշելիությունը, փափկեցման և ցրտադիմացկունության գործակիցները:

Նախատեսվում է ուսումնասիրել քիմիական և պետրոգրաֆիական կազմերը, իրականացնել ռադիոչափական ուսումնասիրություններ:

Նախատեսվում է ուսումնասիրել հայցվող տեղամասի հիդրոերկրաբանական պայմանները:

Այնուհետև Արարատ համայնքի ղեկավար Ա. Ավետիսյանը ներկայացրեց հողի վարձավճարի չափի մասին և սոցիալական ծրագրերի մասին տեղեկատվություններ:

Քննարկման մասնակիցների կողմից եղան հարցեր, որոնց վերաբերյալ տրվեց պատասխաններ: Ներկայացվեց, որ Ընկերությունը պատրաստակամ է մասնակցել համայնքի սոցիալական ծրագրերի իրականացմանը: Քննարկման ժամանակ հարցերի մեծ

մասը վերաբերվում էր օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների ժամանակ բնապահպանական միջոցառումներին:

Հանրային քննարկումը համարվեց կայացած և ներկա գտնվող համայնքի բնակիչները ողջունեցին նախատեսվող գործունեությունը:

Քննարկումների պատասխանատու՝

Արարատ համայնքի ղեկավար՝ Ա. Ավետիսյան

<<Կարծրաքար>> ՍՊԸ ներկայացուցիչ՝ Լ. Ավետիսյան

ԿՐԱՔԱՐ
КРАКАР
KRAQAR
00523332